ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

«18» հոկտեմբեր 2022թ. № 44-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԶԵՆՔԻ ԵՎ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՄԱՆ ԶԵՏԵՂԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ԶԵՆՔԻ ԵՎ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 9-ի № 722 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում մարտական և այլ զենքի, դրանց փամփուշտների ու ռազմամթերքի շրջանառության կարգի 14-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զենքի և ռազմամթերքի պահման զետեղարանների և դրանում զենքի և ռազմամթերքի պահմանը ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետի՝ զենքի պահպանման և տրամադրման համար

պատասխանատու ստորաբաժանման աշխատանքները համակարգող տեղակալին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

1/18/2022

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2022 թվականի
հոկտեմբերի 18-ի № 44 -Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԶԵՆՔԻ ԵՎ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՄԱՆ ԶԵՏԵՂԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ԶԵՆՔԻ ԵՎ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) զենքի և ռազմամթերքի (այսուհետ՝ զենք) պահման զետեղարաններին (այսուհետ՝ զետեղարան) և Կոմիտեի տնօրինության տակ գտնվող զենքի պահմանը ներկայացվող պահանջները:

2. Կոմիտեն կարող է ունենալ մեկ հիմնական գլխամասային զետեղարան (այսուհետ՝ Կոմիտեի զետեղարան), որտեղ հաշվառվում են Կոմիտեի տնօրինության տակ գտնվող բոլոր զենքերը, անհատական պաշտպանության և հատուկ միջոցները, և Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների զետեղարաններ (այսուհետ՝ Կոմիտեի ստորաբաժանումների զետեղարաններ), որտեղ կարող են պահվել միայն տվյալ ստորաբաժանման ծառայողներին հատկացված զենքերը, անհատական պաշտպանության և հատուկ միջոցները:

3. Կառուցվածքային ստորաբաժանումների զետեղարանները ձևավորվում են Կոմիտեի նախագահի հրամանով՝ տվյալ ստորաբաժանման ղեկավարի դիմումի և զենքի պահպանման և տրամադրման համար պատասխանատու բաժնի դրական եզրակացության հիման վրա:

4. Զետեղարաններում զենքի պահպանության համար պատասխանատու անձ (այսուհետ՝ զետեղարանի պատասխանատու) և նրան փոխարինող է նշանակվում

Կոմիտեի նախագահի հրամանով՝ զետեղարանի համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ:

5. Կոմիտեի ստորաբաժանումների զետեղարանների պատասխանատուները տվյալ ստորաբաժանման ծառայողներին հատկացված զենքերը համապատասխան արձանագրությամբ ստանում են Կոմիտեի զետեղարանի պատասխանատուից և տվյալ ծառայողի կողմից զենքը հանձնելու պարտականություն առաջանալու օրենքով նախատեսված դեպքերում նույն կերպ հանձնում Կոմիտեի զետեղարան:

6. Զետեղարանում առկա բոլոր մատյանները պահվում են չհրկիզվող պահարանում, դրանցում գրառումները կատարվում են թանաքով, պարզ ու առանց ջնջումների, վարվում են մինչև լրիվ ավարտվելը, իսկ ավարտից հետո պահվում են առնվազն 5 տարի:

7. Զետեղարանի պատասխանատուն պետք է մշտապես հստակ տեղեկություն ունենա զետեղարանում առկա գույքի առկայության, վիճակի, ամրագրման վերաբերյալ և այդ նպատակով վարի համարային հաշվառման էլեկտրոնային ցուցակ (Ձև №1) ու զենքերի ամրագրման էլեկտրոնային մատյան (Ձև №2):

8. Զետեղարանում ամենամյա գույքագրումից բացի պետք է կատարվի ոչ պլանային գույքագրում բնական և տեխնածին աղետի, հրդեհի, վթարի կամ այլ արտակարգ իրավիճակների դեպքում, որոնց հետևանքով կատարվել է զենքերի և ռազմամթերքի տեղափոխություն:

2. ԶԵՏԵՂԱՐԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

9. Զետեղարանները պետք է համապատասխանեն տեխնիկական ամրացվածության հետևյալ պահանջներին.

1) Շենքերի պատերը, միջնորմները, առաստաղը, հատակը պետք է լինեն կապիտալ կառուցված, քարային շարվածքի հաստությունը պետք է լինի 360 մմ-ից ոչ պակաս, պատերի բետոնային բլոկները՝ 200 մմ-ից ոչ պակաս, երկաթբետոնե ծածկերը՝ 180 մմ-ից ոչ պակաս, երկու շերտով բետոնային բլոկները՝ յուրաքանչյուրը 90 մմ: Նշված պահանջներին չհամապատասխանող կառույցի հատվածները, ինչպես նաև պատուհանները (առկայության դեպքում) պատվում են 16 մմ-ից ոչ պակաս երկաթյա ձողերից պատրաստված 150x150 մմ-ից ոչ ավելի չափի վանդակաշարով: Ներքին պատերը կառուցելու ժամանակ թույլատրվում է օգտագործել զուգավորված բետոնե միջնապատային սալեր, յուրաքանչյուրը 80 մմ-ից ոչ պակաս հաստությամբ, նրանց միջև նշված վանդակաշար անցկացնելով: Պատերի ամրացման համար

թույլատրվում է օգտագործել այլ հատուկ նյութեր, որոնք իրենց տեխնիկական բնութագրով չեն զիջում նշված կոնստրուկցիաներին: Զետեղարանների տեխնիկական ամրացվածության նշված պահանջների կատարման մասին կազմվում է ակտ:

2) Ինժեներական ցանցերի համար նախատեսված, ինչպես նաև օդափոխիչ հորանցքերը, պատերի անցքերը փակվում են 16 մմ-ից ոչ պակաս հաստությամբ երկաթե ձողերից պատրաստված 50x50 մմ չափի վանդակաշարով:

3) Դռների խորշերը սարքավորվում են՝ 3 մմ-ից ոչ պակաս հաստությամբ երկաթյա դռնով, որը ուժեղացվում է պարագծով և անկյունագծով՝ պատերի 3 մմ-ից ոչ պակաս հաստությամբ և կողերի 50 մմ-ից ոչ պակաս լայնությամբ երկաթյա պրոֆիլով, 16 մմ-ից ոչ պակաս հաստությամբ ձողերով և 150x150 մմ-ից ոչ ավելի վանդակների չափերով պատրաստված վանդակապատ դռնով, որը նույնպես ամրացվում է պարագծով և անկյունագծով: Դռան խորշի շրջանակը պատրաստվում է պատերի 5 մմ-ից ոչ պակաս հաստությամբ և կողերի 100 մմ-ից ոչ պակաս լայնությամբ երկաթյա պրոֆիլից:

4) Վերը նշված երկաթյա վանդակապատ դռան ձողերը յուրաքանչյուր հատման և պրոֆիլների հետ միացման տեղերում եռակցվում են, իսկ դռների խորշի շրջանակները ամրացվում են պատերի մեջ 80 մմ խորությամբ և ցեմենտապատվում են:

5) Մուտքի հիմնական և վանդակապատ դռները պետք է ունենան երկու փականներ, ծխնիների հուսալի կառուցվածք և ամրություն: Փականների փակող մասի լայնակի կտրվածքի մակերեսը պետք է լինի 3 քառ. սմ-ից ոչ պակաս: Մուտքի դուռը լրացուցիչ սարքավորվում է կնքման համար հարմարանքով, ինչպես նաև 3 մմ-ից ոչ պակաս հաստությամբ երկաթյա ականջիկներով, դրսից կախովի կողպեքով կամ երկրորդ ներքին փականով փակելու համար:

6) Զետեղարանը պետք է սարքավորվի հրշեջ անվտանգության նորմերին համապատասխան, հրդեհաշիջման միջոցներով և պահպանության դիտակետին միացված ահազանգման համակարգով կամ ինքնաահազանգման համակարգով՝ ձայնային կամ լուսային ազդանշանը մոտակա պահակակետին (եթե այն շուրջօրյա ծառայության է) կամ զետեղարանի պատասխանատուի, նրան փոխարինողի բջջային սարքին միացնելով: Ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը պետք է ունենա պահեստային էլեկտրասնուցման աղբյուր:

3. ԶԵՏԵՂԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԶԵՆՔԻ ՊԱՀՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Կոմիտեի տնօրինության տակ գտնվող զենքերը պետք է պահվեն զետեղարաններում՝ չիրկիզվող կամ մետաղյա պահարաններում, բուրգերում՝ լիցքաթափված, իջեցված ձգանով, պահպանակի դրված, մաքրված, յուղված, փամփուշտներից առանձնացված վիճակում:

11. Զետեղարանի, նրանում գտնվող չիրկիզվող կամ մետաղյա պահարանների, բուրգերի բանալիների մեկ խուրձ պետք է պահվի զետեղարանի պատասխանատուի մոտ, իսկ նույն բանալիների պահեստային խուրձը՝ նրա անմիջական ղեկավարի մոտ:

12. Զետեղարանի պատասխանատուն, զետեղարանից դուրս գալուց, պետք է նրանում գտնվող չիրկիզվող կամ մետաղյա պահարանների, բուրգերի դռները, ինչպես նաև զետեղարանի հիմնական դուռը փակի փականով և կնքի դրոշմակնիքով, որի դաջման արդյունքում պետք է մեջտեղում կարդացվի՝ «Զետեղարան № 1» և շրջանաձև գրված լինի զետեղարանի համար պատասխանատու ստորաբաժանման անվանումը: «Զետեղարան № 2» և զետեղարանի համար պատասխանատու ստորաբաժանման անվանման շրջանաձև գրառմամբ դրոշմակնիք պետք է ունենա զետեղարանի պատասխանատուի անմիջական ղեկավարը:

13. Զետեղարանի բանալիների պահեստային խուրձը կարող է օգտագործվել միայն տվյալ զետեղարանի համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կարգադրությամբ՝ Կոմիտեի երեք աշխատակիցների ներկայությամբ:

14. Սույն հավելվածի 13-րդ կետում նշված դեպքում՝

1) կազմվում է ակտ երկու օրինակից, որտեղ նշվում է ում կարգադրությամբ, երբ և ով է բացել զետեղարանը, ի՞նչ է վերցված և ու՞մ է փոխանցված.

2) ակտը ստորագրում են բացումը կատարող Կոմիտեի աշխատակիցները.

3) ակտի մեկ օրինակը դրվում է զետեղարանում, իսկ մյուսը պահվում է ստորաբաժանման ղեկավարի մոտ.

4) բացված պահարանը և զետեղարանը կողպվում, կնիքվում է բացումը կատարող անձի դրոշմակնիքով, դրոշմակնիքի համարը նշվում է ակտում:

15. Զետեղարանի պատասխանատուի գործուղման, արձակուրդ մեկնելու, երկարատև անաշխատունակության, աշխատանքից ազատվելու կամ այլ պաշտոնի տեղափոխվելու դեպքերում զենքերը, անհատական պաշտպանության և հատուկ միջոցները, հաշվառման փաստաթղթերը և զետեղարանի համար նախատեսված դրոշմակնիքը ակտով

փոխանցվում են փոխարինող անձին, իսկ նրա բացակայության դեպքում իր անմիջական ղեկավարին կամ նրան փոխարինողին:

16. Զետեղարանի ոչ աշխատանքային ժամերին և ոչ աշխատանքային օրերին բացումը կատարվում է բաժնի պետի թույլտվությամբ, ում ենթակայության տակ գտնվում է զետեղարանը:

17. Զենք պահելու չհրկիզվող կամ մետաղյա պահարաններում, բուրգերում ամրացվում են հաշվեպիտակներ, որոնց վրա նշվում են զենքերի մոդելները, համարները՝ համաձայն համարային հաշվառման ցուցակի ու ամրագրման մատյանի:

18. Յուրաքանչյուր չհրկիզվող կամ մետաղյա պահարանի, բուրգի համար ստեղծվում է գույքացուցակ, որտեղ նշվում է պահվող զենքի տեսակը, քանակը և համարները, որը փակցվում է պահարանի դռան ներսի կողմից:

19. Պահարանում լիցքավորված պահունակներ պահելու դեպքում արկղում փակցվում է պահունակներ վերալիցքավորման ժամանակացույց դրանց փոխարինման նպատակով, որը կատարվում է վեց ամիսը մեկ անգամ:

20. Փամփուշտների արկղեր և աէրոզոլային սարքեր պարունակող պահարանները պետք է տեղադրվեն տաքացուցիչ սարքերից 1 մ հեռավորության վրա: Պահարանների և բուրգերի միջև հեռավորությունը պետք է հնարավորություն տա դրանց դռների ազատ բացվելուն:

21. Կոմիտեի տնօրինության տակ գտնվող զենքերն հետագա օգտագործման համար ոչ պիտանի կարող են ճանաչվել համապատասխան փորձաքրեագիտական եզրակացությամբ, որի դեպքում կազմվում է դուրսգրման ակտ և ոչնչացվում սահմանված կարգով:

Ձև № 1

ՁԵՆՔԵՐԻ ՀԱՄԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ

№	Ձենքի տեսակը, մոդելը	Գործարանային համարը	Արտադրության տարեթիվը	Պահունակը	Ամրագրումը	Տեխնիկական վիճակը	Նշումներ
1	2	3	4	5	6	7	8

Ձև № 2

ՁԵՆՔԵՐԻ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՏՅԱՆ

№	Ծառայողի անուն, ազգանուն, հայրանուն	Ծառյողի պաշտոնը	Հեռախոսի համարը	Ձենքի մոդելը	Ձենքի համարը	Տրամադրման հրամանը	Տրամադրման օրը	Թույլտվության համար	նշումներ
1	2	3	4	5	6	7	8	9	10